

## Ընտանեկան Համերաշխության Աղօթք

Ո՛վ սուրբ Յովսէփ, պաշտպան քրիստոնէայ ընտանիքին, դուն մեզի պէս ճանչցար ընտանեկան կեանքը: Մարիամի հետ ապրեցար փոխադարձ եւ կատարեալ սիրոյ առօրեայ կեանք մը: Ձեր փոխադարձ սէրը կը կեդրոնանար Աստուծոյ Որդիին մէջոր նաեւ ձեր զաւակն էր: Եւ մեզի պէս, ձեր սէրը պահպանեցիք եւ աճեցուցիք ուրախութիւններու եւ դժուարութիւններու մէջ:

Պաշտպանէ՛ այսօր մեր ընտանիքը: Օգնէ՛ մեզի որ հասկնանք զիրար՝ հետեւելով օրինակին քու Որդւոյդ որ կը դիտէր նախ մարդուն սիրտը եւ ոչ միայն դէմքը: Ըրէ որ երբէք հպարտութիւնն ու անձնասիրութիւնը չվնասեն մեր սիրոյն: Դարձո՛ւր մեզ օրստօրէ աւելի հաւատարիմ մեր խօստումներուն: Օգնէ՛ մեզի որ որքան աւելի ապրինք, այնքան աւելի մօտենանք իրարու եւ մեասին Աստուծոյ Որդիին, որ միշտ ներկայ է համերաշխ ընտանիքներուն մէջ: Ամէն: